հողաբոյնն մեր ընդ մէջ բարեգոյն որոգայթին մերոյ, որ 'ի զօրութենէ Շնորհաց քոց կազմեալ զի կացցէ և մնասցէ նա անշարժ 'ի վերայ գործոց բարեաց, և զօրութիւն հոգոյ մերոյ զերծցի 'ի թշուառութենէ այս աղմկալի բնութենէ և պահելով պատիւ ազատութեան մերոյ՝ բառցցի նախատինս 'ի մարդկանէ 'ի յերեսս երկրի մերոյ և փրկեսցի խղճմտանս մեր մէջ ամենայն գործոց, զի գտցուք արդարացեալք հոգի և մարմին մեր 'ի հանդերձելումն առաջի աստենի քոյ Տէր։

Թէպէտ 'ի վեր բազմիցս յիշեցաք անկարութիւն անձին իմոյ 'ի դպրութենէ և արհեստիւ Շարադրութենէ, նոյն այժմ ևս յիշելով ասեմ, Ես փոքրիկս 'ի մէջ ազգին Հայոց թէպէտ պատիւ ինձ յոյժ համարիմ տեսանելով զիս մի 'ի փոքրկանց հայոց և 'ի որդոց յաբեթեան, այլ տխուր է ինձ տեսանել անկարութիւնն իմ որ ոչ գիտեմ կատարելապէս ոչ բառ և ոչ բայ հայերէն լեզուի, և ոչ Շնորհ արհեստին գրելոյ և խօսելոյ բայց նախանձ մի մեծ 'ի սիրտ իմ 'ի վերայ սեպհական աշխարհին և ազգին իմոյ, որ սայ միայն կարի լցուցանել պակասութիւնն արհեստին իմոյ, վասն այս բանիս Շնորհ 'ի ընթերցողէ խնդրելով՝ ակն ունիմ ներել իմոյս ռամկօրէն շարադրութեան, զի թէպէտ ես ոչ կարացի նշոյլ բանիս քաղցրաբանութեամբ ճառել 'ի ականջս ձեր լսողաց և եղի զիս 'ի տեղի բամ-